

ԱՐՁՆԻՔԱՅՈՑ ԴՅՈՒՐԵԿԱՄԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ (XIX-XX դդ.)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հյուրընկալման ավանդույթը դարերի ընթացքում ձևափորված, միևնույն կամ տարրեր ժողովուրդների առանձին ներկայացուցիչների կամ խմբերի միջև փոխհարաբերությունները կարգավորող բարոյակիրավական հաստատություններից է: Ըստ այդմ, շատ ժողովուրդների ավանդական մշակույթում այս սովորույթը ծիսականացված է Հյուրին ընդունելը համարվում է պատասխանատու արարողություն: Վաղնջական հյուրընկալման սովորույթը, որն ինքնարբուխ ու կամովի է եղել, միշտ զգալի տեղ է գրավել հայոց ավանդական ընտանեկան-հասարակական կյանքում:

Հյուրընկալման հիմնախնդիրն ազգագրական գիտության ուշագրավ ուղղաներից է, որը, ցավոք, հայագիտության մեջ, ինչպես համահայկան կտրվածքով, այնպես էլ ըստ ազգագրական մարզերի, ցայծմ հանդամանութեն ուսումնասիրված չէ: Մինչեռ հյուրընկալման և հյուրասիրության հայոց ավանդույթների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի համայնական սովորույթների, փոխօգնության, սոցիալ-դասակարգային հարաբերությունների, հյուրանոցների, իջևանատների ծագման ու զարգացման պատմության և այլ տեսանկյուններից¹:

Հին Հայաստանում հեթանոս հայերն ունեին հյուրընկալման աստված՝ Վանատուրը, որի մեջյանը գտնվում էր Բագրեանդ գավառի Բագրավան դիցավանում։ Նրան նվիրված տոնն արվում էր գարնանը կամ ամռանը. ուխտավորներն օգտվում էին մեծենական Հյուրանոցներից։ Նավասարդի տոնական շաբաթվա ընթացքում տեղի էին ունենում նավասարդյան բազմապիսի խաղեր։ Հյուրերին հայ մարդը պարտավոր էր «վանատուրավարի» ընդունել և ճանապարհել։ Տուն մտած հյուրին նախ կերակրում էին, ապա միայն հարց ու փորձով իմանում նրա ով և որտեղացի լինելը։

ինչպես Հայաստանի այլ գավառներում, Աղձնիքում էլ հյուրն Աստծունն էր համարվում: Ավանդական հյուրընկալման սովորույթն աղձնիքցիների կյանքում միշտ էլ եղել է ինքնաբօւխ և կարեոր տեղ գրավել նրանց ընտանեկան-հասարակական կենցաղում: Հյուրընկալները պարտա-

¹ Բավականաչափ լավ է ուսումնասիրված հյուսիսկովկասյան որոշ ժողովուրդների համանան տպառոյթը, որը տեսական արժեք կարող է ունենալ նաև հայ ուսումնասիրողների համար: Տե՛ս Ե. Խ. Պ գ ա յ ն օ կ օ վ. Ա դ յ գ ս կ ի յ է տ ի կ ե տ. Ն ա լ չ ի կ, 1978, ն ո ւ յ ն ի՝ «Прием почетного гостя в традиционной культуре адыгских (черкесских) народов. Этнические стереотипы поведения». Л., 1985; А. К. Б а й б у р и н, А. Л. Т о п а р к о в. У истоков этикета. Л., 1990; В. К. Г а р д а н о в, Гостеприимство, куначество и патронат у адыгов (черкесов) в первой половине XIX века. — "Советская этнография", 1964, № 1; Е. П ч е л и н а. Обряд гостеприимства в Осетии. — "Советская этнография", 1932, № 5, 6.

վոր էին պահպանել հյուրին դիմավորելու, ողջունելու, տեղավորելու, հանգիստն ապահովելու, ճանապարհելու հետ կապված որոշակի չափանիշներ: Նրանք հավատում էին, թե անհյուրընկալները կարող են պատժվել. հրեշտակները հյուրերի կերպարանքով փորձում են նրանց և պատժում զանցառուներին: Հյուրը շատ ժողովուրդների, նաև հայերի մոտ համարվել է սրբազն անձնավորություն, որին պետք էր պատվել ամեն կերպ. ըստ ժողովրդական պատկերացումների, նա գտնվում էր աստվածների հովանավորության ներքո: Ըստ հայկական սովորույթի, ապաստան հայցող ճանապարհորդին համարում էին Աստծո հյուր, որը գտնվում էր տնային պահպան հրեշտակների հովանու ներքո: Հյուրասիրության օրենքները խախտողը ենթարկվում էր հասարակական խիստ պարսավանքի: Հյուրն արտակարգ ուշադրության էր արժանանում ամեն պարագայում՝ անկախ սոցիալական և ազգային պատկանելությունից: Եթե հյուրերը շատ էին լինում, նրանք համարվում էին հյուրընկալի ազգականներինը և հարևաններինը: Գյուղի մեծերը դաշիս, շարվում էին հյուրի շուրջը և ամեն կերպ աշխատում էին շահել, գրավել նրա ուշադրությունը: Ամենուրեք մեծ հարգանք էր վայելում այն ընտանիքը, ուր ամենից շատ էին իջևանում հյուրերը: Ակներև է, որ հյուրերի և հյուրընկալների միջև հնուց անտի մշակված է եղել երկխոսության այն ձևը, որը համընդհանուր է պատմական Հայաստանի բոլոր ազգագրական մարզերում: Այն դեպքում, երբ հյուրը տանտիրոջ ծանոթն էր և հանրահայա անձնավորություն, տան մեծերը, ազգականները նրան դիմավորում էին բակում, փողոցի սկզբում կամ բնակավայրի մատուցներում «Գալներդ թող բարի լինի», «Բարի գալուստ», «Բարով եք եկել», «Մեր աչքի, մեր գլխի վրա տեղ ունեք» և ողջույնի այլ խոսքերով: Եթե անցորդն անծանոթ էր կամ տարիքավոր տղամարդ և օթեան էր խնդրում, նրան դիմավորում և ողջունում էր տանտերը, վերջինիս տանը չլինելու դեպքում՝ մեծահասակ տղամարդը, տանը տղամարդ չլինելու դեպքում տանտիկինը: Հյուրի և հյուրընկալի միջև սովորաբար ընթանում էր հետեւյալ երկխոսությունը.

«— Բարի իրիկուն:

— Աստծու բարին, բարով էկար:

— Օտար մարգ եմ, խուր² չե՞ք ուզի:

— Խուրն Աստծուն է, ախարի ջան, համեցեք, բարով, հազար բարի ես եկել, մեր աչքի վրա տեղ ունես»³:

Եվ հյուրընկալը նրան առաջնորդում էր հյուրասենյակ: Հյուրը բակ և տուն մտնում էր տանտիրոջից հետո, իսկ երբեմն էլ տանտիրոջ համառխնդրանքից հետո՝ նրանից առաջ: Հյուրին ողջունելուց հետո սեղան էին դցում, որի շուրջը հյուրի և տանտիրոջ հետ նստում էին նաև գերդաստանի մյուս տարեց տղամարդիկ: Հյուրին նստեցնում էին պատվավոր տեղում՝ տան «վերին գլուխը», դռան դիմաց, կարպետի, գորգի կամ բարձի վրա: Մինչև սեղան նստելը, զրուցում էին տարբեր թեմաների շուրջ՝ վար

² Հայերեն հյուր — խուր բառեզրին Աղձնիքում զուգակցել են նաև քրդերեն և թուրքերեն մսավըր, մեվա, լոնախ, կունախ հոմանիշները:

³ Ռ. Ն ա հ ա պ ե տ յ ա ն. Գերդաստանական տունը և կենցաղը Աղձնիքի Ազնվացձոր գավառում.— «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, №1, էջ 240—241:

ու ցանքից, գյուղի նորություններից, եղանակից, անձնական կյանքից: Անձանոթ այցելուներին և ճանապարհորդներին նույն վերաբերմունքն էր ցույց տրվում: Կատարելով ողջունելու, հրավիրելու, տեղավորելու ավանդական սովորույթները, տանտեղը զրույցի մեջ էր մտնում հյուրի հետ, սակայն չէր հարցնում ո՞վ լինելը, քանի որ եթե հարկ էր լինում, հյուրն ինքն էր ներկայանում: Ահա թե ինչու կար ասույթ: «Նախ հաց, հետո՝ հարց»: Եթե հյուրը հայտնում էր իր ով լինելն ու այցի նպատակը, և տանտեղը հասկանում էր, որ նրա այցը գաղտնի չէ, տունը շուտով լցվում էր բարեկամ-հարազատներով, որոնք ձգտում էին զբաղեցնել և ուրախացնել հյուրին: Ուտելուն նախորդում էին լվացվելն ու տանտիրոջ աղոթքը: Ապա զերջինիս խնդրանքով հյուրը սկսում էր ճաշել, նրան հետեւում էին մյուսները: Վերջում տանտեղը «մարսողական» մաղթանք էր անում⁴:

Աղձնիքն Արևելքի և Արևմուտքի տարանցիկ հանգույցն էր, որտեղով բազմաթիվ քարավաններ էին անցնում: Հայերից բացի լինում էին նաև անկոչ հյուրեր՝ քրդեր, թուրքեր, արաբներ, պարսիկներ, ասորիներ, հույներ և այլք, որոնցից շատերի լեզուներին տիրապետում էին հյուրընկալները, ուստի վարփելակերպն էլ տարբերություններ էր ունենում հյուրընկալփողների էթնիկական և կրոնական պատկանելությանը համապատասխան:

Ընտանեկան հյուրընկալմանը զուգակցում էր նաև համայնքային հյուրընկալումը: Հնագույն սովորույթի համաձայն, XIX դ. վերջերին հայ համայնքը կառուցում էր իշեանատներ՝ գոմեր իրենց օդաներով, որոնք հատկացվում էին հատկապես մեծ քարավանատերերին, սայլվորներին, գրաստավորներին, բազմաքանակ հյուրերին և գյուղին անձանոթ այլ անձանց: Գեղջավագը (ռեսը) օտար հյուրերին կերակրելու և անասնակեր հայթայթելու միջոցները հացը, վառելիքը, անասնակերը, հոգում էր համայնքի ընտանիքներից: Համայնքը հաճախ կեր հայթայթելն անում էր հերթական կարգով, այն իրականացնում էր գյուղի կատարածուն, նրա բացակայության դեպքում նշանակված անձինք, մեկ շաբաթ տևողությամբ, սրանք հայտնի մերժությունները հացը, վառելիքը, անասնակերը, հոգում էր համայնքի ընտանիքներից: Համայնքը հաճախ կեր հայթայթելն անում էր հերթական կարգով, այն իրականացնում էր գյուղի կատարածուն, նրա բացակայության դեպքում նշանակված անձինք, մեկ շաբաթ տևողությամբ, սրանք հայտնի մերժությունները հացը, վառելիքը, անասնակերը, հոգում էր համայնքի ընտանիքներից: Համայնքը հաճախ կեր հայթայթելն անում էր հերթական կարգով (այդպես կոչում էին ունեող ընտանիքներին) վրա, իսկ նրանց թիվը սահմանափակ լինելու դեպքում բավարարվում էին ռեսի տանը հյուրընկալություն կազմակերպելով:

Հյուրասիրությունը կախված էր հյուրընկալի ունեորությունից: Ընտանիքը տարվա ըոլոր եղանակներին հյուրերի համար պահածոյացրած մթերք էր պահում: Ամենահարգի կերակուրը մատուցում էին հյուրերին և ամեն ընտանիք ձգտում էր հնարավորինս լավ կերակրել նրան՝ իր տան պատիվը դրա մեջ տեսնելով: Հյուրին լավ ճանապարհելը, ըստ էության, դառնում էր համայնքի պարտականությունը⁵: Ինչպես և ինչով հյուրասի-

⁴ Բ. ն ա հ ա պ ե տ յ ա ն.- Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տեսար թ, էջ 84:
⁵ ԴԱՆ, տ. 8, էջ 126, տ. 9, էջ 82:

բելու հանդամանքն այնքան մեծ ուշադրության էր արժանանում հյուրերի և հյուրընկալողների կողմից, որ հյուրընկալող ընտանիքն ստանում էր պատվական և կամ էլ նվաստացուցիչ մականուն⁶: Պաշտոնատար, անվանի հայ կամ օտար հյուրերի համար երինջ կամ արջառ էին մորթում, մորթելու պատիվն էլ նրանց էր տրվում: Քուրդ պաշտոնյաները երբեմն չարաշահում էին հայերի հյուրընկալ այդ սովորույթը՝ վայել չհամարելով հայի ձեռքով մորթված անսասունը: Հյուրի համար մորթվող անսասունը «սրբըրը» էր կոչվում: Պատվագոր հյուրերին մատուցվում էին մեղր, բաստեղ, շարան, պոպովի բոր (ընկույզի միջուկ), սեր, մածուն և այլն: Թանգ հյուրին անվանում էին «ոչխարի մարդ»: Մկրտիչ քահանա Մուրադյանը, սասունցի սարվորների առաջ հյուրասիրությունը արձանագրելով, նշում է, թե «զոգաներում (այդպես էին անվանում ամառանոցները. – Ռ. Ն.) կաթնամշակ կանայք, որոնց անվանում էին բերվուներ, անցորդներին պատվում էին կաթ, սեր, կարագ և դրանցից պատրաստած համեղ կերակուրներ»⁷: Հյուրասիրության ժամանակ առաջ էին յուղեղեն կերակուրները բլղուրով, բրնձով փլավը: Մ. Մուրադյանի հավաստմամբ, յուղը լցնում էին շերեփով կամ կավամանով, պանիրը ոչ թե կտրված, այլ ամբողջ դլխով էին սեղանին դնում⁸: Սովորական, պատահական անցորդ հյուրերին անդամ կերակրում էին ոչ ամենօրյա կերակուրներով: Հավ էին մորթում, ճմուռ, ճվածեղ, սեր, մածուն, զառւրմա մատուցում: Աղքատ ընտանիքներում առօրյա կերակուրը չորթանով, էխնի կոչված շաղգամով, մսով, նվիկ կոչված բանջարով ճաշատեսակներն էին: Հյուրընկալությունն առատորեն էր կաղմակերպվում նաև Աղձնիքի հովտային շրջանների քրդախառն բնակեցված գյուղերում, որտեղ հիմնական սնունդը բրնձով և բլղուրով փլավն էր, ապա մածունը, ճուռ և այլն:

Վիպասան Բաֆֆին ուշադրավ նկարագրություն է թողել Բիթլիսի նահանգի գյուղերից մեկի ռեսի տանը հյուրընկալվելու վերաբերյալ. «Ամենքը սպասում էին քահանային, որ սեղանը օրհնե և ապա սկսեին ուտել: Թե կերակուրները և թե հացը այնքան առատությամբ դրված էին սեղանի վրա, որ ինչպես ասում են, ասեղ դցելու տեղ չէր մնացել: Այդ նրա համար էր, որ հյուրերը չամաչեին, չքաշվեին, որ ուտեին, որքան կամենում էին և գարձյալ մեծ մասը մնար սեղանի վրա: Այդ ամոթը ոչ այնքան շատակեր հյուրին, որքան տան տիրողը կվերաբերեր, եթե նրա սեղանի մի փոքրիկ մասն անդամ րացվեր: Ոտքի վրա մեզ պատվելու համար ծառայում էին տան հարսները, աղջիկները և պատանիները: Կատարյալ իրարանցում էր տիրում, երբ որեից պատվեր էին տալիս այդ ընտանիքան սպասավորներին: Կանայք թեև մեզ հետ չէին խոսում, բայց ուրիշ տեղերի հայ կանանց

⁶ Սանան Հազգո քաղաքի «Փլավենց» ազգատոհմն իր անվանումն ստացել էր հյուրերին մշտապես փլավ մատուցելու համար: Իսկ Գելիեգուզան գյուղում «Գախորնի» կամ «Դավրաշնի» անվանվող ազգատոհմն իր այդ մականունը ստացել էր երկու քուրդ աղաների պատվին մորթած եղը տան տղամարդկանց կողմից ամբողջությամբ ուտելու համար: Քուրդ աղաներից մեկը նրանց շատակերության վրա զարմացած, դոչել է. «Դախոր» եղ ուտող, իսկ մյուսը «դըվրը» և բերան, գայլի բերան: Երբեմն էլ այնքան առաջ էին հյուրասիրում, որ հյուրընկալվող մարդիկ այլ վայրերում երդվում էին այդ հյուրասեր գերդաստանի հացով (ԴԱՆ, առ. 3, էջ 118–126, առ. 7, էջ 185, 200, առ. 9, էջ 83):

⁷ «Բազմավեպ», 1936, №1–2, էջ 47:

⁸ ԴԱՆ, առ. 8, էջ 126–127:

նման, երեսները չէին ծածկում: Ուսի ընտանիքից բացի նրա ավագ եղբայրներից ոչ ոք սեղանի վրա նստած չէր: Կրտսեր եղբայրները, ձեռքերը կրծքի վրա խաչաձև դրած, անշարժ կանգնած էին և հրամանի էին սպասում: Կանանցից ոչ ոք սեղանակից չէր: Այդ սովորությունը պահպանվում է ոչ միայն այն ժամանակ, երբ սեղանի շուրջ օտար հյուրեր կան, այլև իրենց ընտանեկան շրջանում կինը տղամարդու հետ միասին չի ճաշում: Նախ ուտում էին տղամարդիկ և ապա կանայք»⁹:

Անչափ ուշագրավ են Հովսեփ Օրբելու ազգագրական դիտարկումներն Արևմտյան Հայաստանի Մոկս գավառում, ուր նա եղել է 1911–1912 թթ.: Այստեղ Հ. Օրբելին հավաքում է շատ հետաքրքիր, կարելի է ասել՝ ազգագրական, բանահյուսական և բարբառագիտական եղակի նյութեր: Ուշագրավ են հատկապես միջէթնիկ հարարերությունները, հեղինակին հյուրնկալած՝ իր հայանպատ գործունեությամբ հայտնի քուրդ գավառապետ Մուրթուլա բեկի տանը հյուրնկալման մանրամասները: Սովորույթի համաձայն, Մոկսում ևս հավաքույթների կամ ճաշկերույթների ժամանակ րազմում էին բարձերին (դմիկներին)՝ ըստ ավագույթյան կարգի, որը հիշեցնում է հին իրանական ու հայկական «Գահնամակի» կարգը¹⁰:

Մեծ ուշագրություն էին հատկացնում հյուրի սենյակին և անկողնուն: Հյուրերի համար առանձին սենյակներ ունեին միայն մեծահարուստները: Շատ դեպքերում էլ հյուրը քնում էր գլխատանը՝ տանտերերի հետ, ուր նրան հատկացվում էր ամենապատվավոր տեղը՝ թոնը կամ թվեքի (օջախ) մոտ, նահապետի կողքին: Սակավ էին այն ընտանիքները, որոնք հյուրերի համար նախատեսվող հատուկ անկողին կարող էին ունենալ, ուստի չունեցողները դիմում էին հարևաններին, կամ էլ ընտանիքի անդամներից մեկի անկողինն էին հատկացնում հյուրին: Այստեղից էլ՝ «մեզ նեղ կանենք, ձեզ տեղ կանենք» ասույթը: Հյուրերի անկողինը պահպան էր առանձին, խնամքով ու մաքուր «սկերես» չլինելու համար: Սովորական ընտանիքներում իրեւ անկողին գործածել են կարպետը կամ թաղիքը՝ որպես ներքնակ, և մազե փալասը՝ վերմակ: Աղձնիքի հովտային, առավել քրդախառն շրջաններում անկողինը «յաթաղ» են անվանել:

Հյուրերի հանդեպ վերաբերմունքը տարբեր էր լինում, նայած նրա սեռին, դիրքին ու ազգությանը: Որոշակի տարբերություններ էին դրվում ծանոթ և անծանոթ, պաշտոնյա կամ աղքատ հյուրերի միջև: Առավել մեծ ուշագրության էին արժանանում բարձրաստիճան անձինք, հեռվից եկող խնամիները, քափորը, հայ մտավորականության, ազգային-ազատագրական պայքարի գործիչները և այլք: Վերաբերմունքի տարբերություն կար նաև արական սեռի հյուրերի միջև. տղամարդ հյուրը խորհրդանշուն հաց էր կոչվում, իսկ կինը՝ կտոր (Հացի): Կին հյուրերով գրադպում էին միայն կանայք, հատկապես տանտիրուհին, իսկ տղամարդ հյու-

⁹ Րաֆֆի. Երկերի ժողովածու տաս հատորով (այսուհետև՝ ԵԺ). հ. 4, Երևան, 1965, էջ 332–333:

¹⁰ И. А. Оబели и быт Мокса. М., 1982. Հմատ. Դ. С. Варданян. Н. А. Омбрадзе. Этнографическое исследование Иосифа Орбели в Моксе. – Международная конференция "Археология (VI), Этнография (V) и фольклористика Кавказа (III)", Тбилиси, 2004.

բերին դիմավորողը, ողջունողը ե. ներս հրավիրողը տան նահապետն էր,¹¹ իսկ սննդի և կենցաղի հարցերով՝ տանտիրուհին (տանդդինը)՝ «ձեռքի տակ օգնական ունենալով հարսներին»: Հյուրի առջև դուռ բացող-փակողը ջահել հարսն էր: Մինչդեռ Աղձնիքի քրդախառն հովտային շրջաններում կանայք և աղջիկները խիստ մեկուսացված էին: Խտրականությունը երևան էր գալիս հատկապես անկոչ (անցանկալի) հյուրերի նկատմամբ, որոնք չարաշահում էին «Հյուրն Աստծուն է» արտահայտությունը և նյութական վնաս հասցնում հյուրընկալներին: Իսկ ցանկալի հյուրերը տան անդամ էին համարվում:

Հարսները պարտավոր էին մաքրել հյուրի տրեխները, լվանալ գուլպաները, գցել անկողինը, ստեղ-ստեղ հանել այն արկի տակ, կարգի բերել նրան հատկացված անկյունը և այլն: Տան փոքր հարսը մինչև բոլորի քնելը պիտի միշտ դռան հետեւ կանգնած լիներ՝ ամեն տեսակ ծառայություններ կատարելու: Պատվագոր օտարականին, այդ թվում քուրդ տարեց հյուրին, նա ամեն օր, լուսադեմին տանում էր տաշտով ջուր, սրբիչ և այլն, որպեսզի քուրդը, ըստ սովորույթի, լվանա իր գոտկատեղից ներքև: Հարսը տան նահապետին պիտի տեղեկացներ, որ ինքը կատարել է հյուրի բոլոր ցանկությունները, որից հետո իր գործին անցնելու թույլտվություն ստանար:

Հայաստանի պատմագգագրական գրեթե բոլոր մարզերում, երբ նահապետական գերդաստաններում երեսում էր մի հյուր կամ ճանապարհորդ, ամենակրտսեր, ջահել հարսը պարտավոր էր իսկույն ջուր տաքացնել, լվանալ հյուրի ոտներն ու գիշերն էլ անկողին գցել, անգամ օգնել նրան հանգիլիս ու պառկելիս: Եվ Հյուրն իրավունք չուներ հրաժարվելու հարսի նմանատիպ ծառայություններից, այլապես վիրավորած կլիներ տանտերերին: Ուշագրավ է, որ չխոսկան հարսն իրավունք չուներ օտար տղամարդու առաջ երեալու: Իսկ այժմ նա հյուրի ոտքերն էր լվանում, օգնում զգեստները հանելուն և պառկելուն: Տան անդամները հյուրին վերաբերվում էին սիրալիր, ամեն բան անում, որպեսզի չնչին չափով իսկ չվիրավորվեր նրա ինքնասիրությունը, այլապես տանտերը կարող էր խստագույնս պատժել հյուրին վիրավորանք հասցնող տնեցուն¹²: Հյուրն էլ իր հերթին պարտավոր էր զուսակ ու պարկեշտ լինել, հարդել իրեն մատուցվող բոլոր ծառայությունները, բավարարվել այն ամենով, ինչ հրամցվում էր: Այս ամենը հիմք է տվել և. Սամուելյանին կարծիք հայտնելու, որ այս սովորույթը, ըստ երեւույթին, ազգագրական դրականության մեջ հայտնի, երբեմնի կրոնական հետերիզմի մնացուկային դրսևորումներից է¹³:

Հյուրընկալող ընտանիքի սրբազն պարտքն էր հյուրի անձնական անվտանգությունը: Ինչպես ասվում էր՝ «Հյուրի գլխից մազ անդամ չպիտի պակասեր»: Հյուրընկալ օջախը պարտավոր էր պաշտպանել իր տունը

¹¹ Սասնա Կուսքետ գյուղում, ուր ամեն մի ընտանիք հազիվ էր կերակրվում փոքրիկ, անրերի հողակտորից ստացված բերքով, որտեղ բարձր բերք ապահովելու համար մշակում էին մեծ խնամք պահանջող և ոչ գյուղամարս կեկի (կոկի) կոչված հացահատիկ, բնակեները դարձյալ անչափ հյուրասեր էին, բարեհոգի, իրենց ունեցած-չունեցած առատորեն բաժին էին հանում հյուրերին (ԴԱՆ, ա. 3, էջ 119-124, ա. 8 էջ 60-61):

¹² ԴԱՆ, ա. 3, էջ 67, 125, ա. 4, էջ 61:

¹³ Խ. Սամուելյան. Մատրիարիստ. Հին Հայաստանի կուլտուրան. Հ. Ա, Երևան, 1931, էջ 232:

ոտք դրած ապաստան խնդրող մարդուն: Նման դեպքերում տան տղամարդիկ ստիպված էին լինում զենքով պաշտպանել իրենց ապավինած հյուրի անվտանգությունը և հետևել այնքան ժամանակ, քանի դեռ նրան չէին հասցրել իր ուզած ապահով վայրը¹⁴: Հյուրի պաշտպանությունը և անվտանգությունը ոչ միայն տվյալ տան, այլև ազգաառհմի պարտքն էր: Հիվանդ հյուրին երբեք ճանապարհ չէին գնում մինչև նրա ապաքինումը: Նրա խնամքը հանձն էր առնում տան մեծ մայրը՝ օգնական ունենալով մշտապես նրա պահանջները կատարող փոքր հարսին: Հյուրընկալվողի տանը հյուրի անսպասելի մահվան պարագայում, հավաքվում էին համայնքի հեղինակավոր տղամարդիկ, որոնք էլ ապահովում էին հանգուցյալին իր բնակավայր հասցնելը, հոգում ծախսերը, որպես ուղեկից նշանակում հյուրընկալին և համայնքի մի հեղինակավոր անձի դրանով հարգանքի տուրք մատուցելով ոչ միայն մեռելի ընտանիքին, այլև նրա համայնքին¹⁵:

Աղձնիքում և Հայաստանի այլ նահանգներում, X-XIV դդ. սկսած, երբ այստեղ թափանցեցին խաչնարած վաչկատուն քրդական ու թուրքական ցեղերը, հայ ժողովրդին պարտադրվեց նաև հարկադրական հյուրընկալում: Քրդական գինյալ խմբերը, հարկահանները, ցեղապետներն ու նրանց պատվիրակներն իրենց այցելություններով մշտապես պատուհաս էին դառնում տարաբախտ հայ բնակչության գլխին: Օդտվելով տեղաբնիկների անպաշտպանվածությունից վայրենարարոնները հյուրի անվան տակ մեծ վնասներ էին պատճառում ոչ միայն նյութական, այլ նաև բարոյական առումով, որովհետև իրենց կացութաձեկի մեջ տակավին պահպանում էին հյուրասիրական հետերիզմի հետքերը: Ուստի և պատահական չէր, որ հայերը հարկադրված էին կառուցել համայնքային իջևանատներ՝ այդպիսի անկոչ հյուրերին առանձնացնելու և վերահսկողությունն ուժեղացնելու նպատակով: Համայնքային հյուրանոց-օդաների գուռը մշտապես բաց էր՝ գգիրի մշտական հսկողությամբ: Այստեղ սաքուների (բուխարու աջ և ձախ կողմերի հողե թմբերի) կամ առզելների (փայտե թախտերի) վրա դրվում էին անկողինները, ճամփորդական իրերը: Համայնքային հյուրընկալման վայր կարող էր ծառայել նաև դյուզի տանուտիրոջ բնակարանին կից կամ վերնամասում առանձին մուտքով կառուցված օդան: Նման հյուրեր ունեցողները կանանց առանձնացնում էին բնակարանի խուլ անկյուններից մեկում: Կանայք մեկուսացված էին մնում՝ մինչև հյուրերի հեռանալը: Դաշտու անկոչ հյուրերի համար տեղ էր հատկացնում համայնական օդա-հյուրասենյակում և անմիջապես սուրճով հյուրասիրում, մինչև ուտեստ պատրաստելը: Այս գեպքում հյուրերի ձեռքին ջուր լցնողները պատանիներն էին, իսկ մատուցողները՝ գգիրը և տան երիտասարդները: Երբ հաճախակի էին կրկնվում ստվար խմբով նման հյուրերի

¹⁴ Սասնա Գրմակ գյուղի տանուտեր Ստեփոյի տանը հյուրընկալվում է մի թուրք ուստիկան, մինչ այդ էլ նրա տանը հյուրընկալված է եղել մի քուրդ: Ոստիկանը հրացանը կախում է պատից, իսկ քուրդը, հրացանի հետ «խաղաղով», սպանում է տանտիրոջ միակ որդուն: Տանուտերն իր հարազատների վրեժինդրությունը կանխելու համար (որոնք պատրաստ էին քրդի «արյունը խմել»), չինդ հոգու ուղարկում է սոտիկանին ուղեկցելու, իսկ քրդին էլ թաքցնում է մի այլ տեղ՝ հաջորդ օրն ապահով տեղ հասցնելու (ԴԱՆ, տ. 3, էջ 119-126):

¹⁵ ԴԱՆ, տ. 3, էջ 120-121, 125:

այցելությունները, դգիրը հերթական կարգով սնունգ էր հավաքում համայնքից: Միայն պառակ տանտիրուհին էր, որ կերակուր մատուցելու համար կարող էր երևալ անկոչ հյուրերին: Այլակրոնների օգտագործած յուրաքանչյուր իրը հարամ էր համարվում և նրանց գնալուց հետո մաքրվում էր մեռնաշըռով կամ քահանայի օրհնած աղով¹⁶: Թուրք և քուրդ հյուրերի գործածելիք ամանեղենը և անկողինն առանձին էր, որն էլ գործածելուց հետո լվանում, մաքրում ու պահում էին: Քրդախառն բնակեցված հովտային շրջաններում հայերի գործածած սպասքեղենը և անկողինը սրանք «Հարամ» էին համարում և պահանջում էին նորը: Աղձնիքի գաշտային Հղնամիր և շրջակա այլ գյուղերում համայնքային հյուրանոց-օգաններում երկու ծալքատեղ էին հատկացնում հայերինը առանձին, այլադավաններինը առանձին: Նրանց քնելատեղն էլ էր առանձին լինում: Հայ և քրիստոնյա այլազգ հյուրերն ընդունվում էին որպես տան անդամ և հյուրասիրվում մեծ տան մեջ, օջախի շուրջ¹⁷:

Աղձնիքում հայ հյուրընկալն բարձրաստիճան թուրք ու քուրդ անձանց հյուր ընդունելիս երեմն ցուցաբերում էր հարկադրական ստրկամտություն, ողջունում քրդական ժեստերով, խոնարհվում նրանց առջև և ձեռքը հասցնում մինչև գետին, ապա գնում ճակատին, որ նշանակում էր՝ նրանց տրորած հողը դնում է իր գլխին: Քիչ թե շատ պատվավոր օտարականին ողջունելիս, տանուտերը ձեռքը դնում էր կրծքին, ապա՝ ճակատին, որ նշանակում էր, թե հյուրը տեղ ունի իր սրտի և գլխի վրա: Բարեկամին ընդունելիս, նախ, ձեռքը դնում էր շուրթերին, ապա՝ ճակատին, ցանկանալով ասել, թե համբուրում և գլխից բարձը է պահում նրա պատիվը: Ձեռք թոթվելով ողջունելը կիրառվում էր հայազգի հյուրեր ընդունելիս:

Անցողիկ-հարկադրական հյուրընկալումը, համենայն գեպս, հայերը մի կերպ տանելի էին համարում: Կար ավելի անտանելին: Վաչկատուն քրդերը, ձմեռանոցներ չունենալու պատճառով, աշնան վերջին իջնում էին հայոց դյուլերը և պահանջում հյուրընկալել իրենց ընտանիքներին ու կերակրել, տեղափորել իրենց անասունները գոմերում ու փարախներում և ապահովել կերպ: Հայ ընտանիքները հարկադրված էին «հյուրընկալել բարբարոսներին» և 5–6 ամիս անհատույց ծառայել նրանց: Նրանք «տարվան երեք եղանակներուն գարուն, ամառ և աշուն, զանոնք իրենց հաշվոցն աշխատեցնելել զկնի՝ ձմեռն ալ խշա գրությամբ իրենց բոլոր անասուններ՝ ձի, ոչխար, տավար կը ցրվեին անոնց վրա պահելու մինչև դարնան և եթե այդ անասուններեն մեկ սատկեր ժողովուրդ պարտական կըլլար անոր փոխարեն երկու հատ վճարել և գոհացնել»¹⁸: Անսլաշտպան հայը պարտավոր էր կերակրել և օթևան տալ նաև հարկահաններին: Գյուղական գգիրն օրը երեք անգամ ուտելիք էր մատակարարում նրանց նախաճաշին՝ սեր, մեղր, կարագ, մածուն, ճաշին՝ փլավ, հավ, մածուն, ընթրիքին՝ ձվածեղ, թանապուր և այլն: Ուտեստր մատակարարվում էր հերթա-

¹⁶ ԴԱՆ, առ. 8, էջ 104–105, առ. 9, էջ 81–83:

¹⁷ ԴԱՆ, առ. 9, էջ 81–84:

¹⁸ Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5900, թ. 516–518:

կան կարգով, ըստ ցուցակի: Երևույթ, որի վերաբերյալ ուշագրավ նկարագիր են թողել Գ. Արվանձոյանցը¹⁹ և Րաֆֆին²⁰:

Դարերի ընթացքում արդեն կենցաղ էր դարձել, որ ամեն մի քրիստոնյա ընտանիք պարտավոր էր ոչ պակաս երեք օր իր տանը «Հյուրընկալել» մահմեդական ճանապարհորդի և պետական ծառայողի: Քրիստոնյա տանտերն իրավունք չուներ հրաժարվելու դրանից և պարտավոր էր առանց առարկության հայթայթել այն ամենը, ինչ նա կապահանջեր, կատարել նրա քմահաճույքները: Այդպիսի հյուրերը երթեմն կամայականությունների զոհ էին դարձնում հյուրընկալողին: Հաճախ անկոչ հյուրի կողմից ոտնահարվում էին հայ բնակչության բարոյական սրբությունները, պատվի իրավունքը²¹: Մեր բանասացներից մեկի հաղորդած ուշագրավ տեղեկության համաձայն, այդ բանն առավել ցայտուն էր դրսեռովում թուրքական կառավարության քրիստոնյա կանանց համար սահմանած տուրքը հավաքելիս: Ըստ այդ տուրքի՝ մաղի խեմքը, որը մաղատար էին անվանում, անցկացնում էին կնոջ գլխով և մեջքով: Եթե խեմքը մնար կնոջ կոնքերին, հարկ էին վերցնում²²: Հայ բնակչությունը, առանձնապես սասունցիները, թեպետ վերին աստիճանի հյուրասեր էին և ամեն հարգանք ցույց տվող ռտարականին, բայց վրեմինդիր էին բարոյագուրկների նկատմամբ:

Հոդվածը թեև վերաբերում է պատմազգագրական որոշակի մարզի, այն ողջ հայության այդ սովորույթի մի տարբերակն է:

ОБЫЧАЙ ГОСТЕПРИИМСТВА АХДЗНИКСКИХ АРМЯН (XIX – XX вв.)

РАФИК НАГАЛЕТЯН

Р е з ю м е

Проблема гостеприимства – одна из неисследованных в армянской этнографии. В данной статье, на основе полевых этнографических материалов, представлены обычай гостеприимства ахдзникских армян. Согласно критериям традиционного обычного права ахдзникских армян существуют определенные нормы приветствия, размещения, обеспечения отдыха и проводов. В тех случаях, когда гость был знакомым хозяина дома и известной личностью, родст-

¹⁹ «Արծուի Վասարականի», 1862–1863, 3, էջ 73:

²⁰ Րաֆֆի. Եֆ, հ. 4, էջ 318–319:

²¹ Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г. М., 1896, с. 143. Մեկ այլ աղբյուրից տեղեկանում ենք, որ Հայ գյուղացին, հարկերը հավաքելու ընթացքում պարտավոր էր կերակրել մյուլթեղիմին ու նրա հետ եղաներին այնքան ժամանակ, որքան որ նրանք դանվում էին դյուղում «երթեմն ալ կը ծեծվին և երթեմն ալ կանանց պատիվն կարառավորվի» (տե՛ս Ատենադրությունք երեսփոխանական ընդհանուր ժողովոյ. Կ. Գորիս, 1874, էջ 470):

²² Սասնա Գոմս գյուղից Խորոն դառնում է հայդուկ՝ թուրք հարկահանին սպանելու և իր տունն այրելու համար: Այդ բանը կատարվում է այն ժամանակ, երբ նա հարկահաններից պահանջում է չչափել իր կնոջ կոնքերը և մաղատարը չանցկանել կնոջ գլխով ու մեջքով, պատրաստ լինելով տալ պահանջնող տուրքը (ԴԱՆ, տ. 3, էջ 120–121):

венники хозяина дома, близкие и соседи встречали гостя во дворе, а иногда — на подступах к селу. Если гость был взрослым мужчиной, его встречал хозяин дома, если женщина — хозяйка. Молодого гостя встречали во дворе, пожилых — на улице, почетных гостей — на подступах к селу. В каждом доме была гостевая постель, которая отличалась от обычных пышностью и чистотой. Незнакомым визитерам и путникам тоже оказывали радушный прием. В жизни западных армян, и в частности армян Ахдзника, которые жили в условиях смешанного обитания с турками и курдами, к сожалению, во многих случаях гостеприимство носило принудительный характер, в основном как следствие иноzemного господства. Несмотря на то, что статья посвящена одной этнографической области, в ней отражается проявление обычая гостеприимства всего армянства.

CUSTOM OF HOSPITALITY OF THE ARMENIANS OF AGHDZNIK
(The 19th – the 20th cent.)

RAFIK NAHAPETYAN

S u m m a r y

The problem of hospitality has not been studied in Armenian ethnographical science up to now. This article tries to introduce the customs of the Armenians of Aghdznik, on the basis of field ethnographical materials. According to traditional customary law criteria of the Armenians of Aghdznik, certain standards of greetings, lodging, security of rest and farewell functioned. In the cases, when the guest was the host's acquaintance and a famous person (the news of his coming was known beforehand), the host's relatives, close friends and neighbours met the guest in the yard and, sometimes, on the approaches to the village. If the guest was an elderly man, the host met him, if a woman — the hostess. The young guest was met in the yard, the elderly one — in the street and the guests of honour — on the approaches to the village. Each house had a bed for the guest, that differed from the family bed with its luxury and cleanliness and the bed was in the most honorary place. Unfamiliar visitors and travellers were also treated cordially. Unfortunately, hospitality had compulsory character in many cases, mainly as a result of foreigners' domination, in the life of Western Armenians, particularly the Armenians of Aghdznik, who lived together with the Turks and the Kurds. Though the article refers to a certain ethnographical period, it represents a version of that custom for all the Armenians.